ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕНЬЕ ЗАПИСКИ ЕРЕВАНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА

Երկրաբանություն և աշխարհագրություն 54(3),2020 ***Геология и география***

*Աշխարհագրություն*

УДК 551.58

# ՀՀ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹՎԻ ՇԱՐԺԸՆԹԱՑԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՀԱՄԱՉԱՓ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎՐԱ

Ա. Հ. ՊՈՏՈՍՅԱՆ *

*ԵՊՀ սոցիալ-տնտեսական աշխահագրության ամբիոն, Հայաստան*

ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման առաջնահերթ խնդիրներից մեկը տարածքային համաչափ զարգացումն է: Ռազմավարական նշանակության այդ խնդրի լուծումը կախված է նաև ՀՀ բնակչության տեղաբաշխման և վերաբաշխման մեջ տեղի ունեցող փոփոխություններից, առկա միտումների բացահայտումից և ստեղծված իրավիճակից: Հոդվածում տրված է վերջին երեք տասնամյակում տեղի ունեցած շարժընթացի հետևանքով ՀՀ բնակչության տեղաբաշխման և վերաբաշխման մեջ տեղի ունեցած փոփոխությունների տարածաշրջանային տարբերությունները, դրանցով պայմանավորված՝ տարածքային անհամաչափ զարգացման հիմնախնդիրների սրումը և մատնանշված են վերջինիս լուծման ուղիները:

https://doi.org/10.46991/PYSU:C/2020.54.3.187

***Keywords*:** RA population distribution and redistribution, population dynamics, balanced territorial development, problems.

**Խնդրի դրվածքը:** Դեռևս խորհրդային վերջին տասնամյակներին ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման առաջնահերթ գերակայություններից մեկը տարածքային համաչափ զարգացման խնդիրն էր: Արդեն 1970–80-ական թվականներին մայրաքաղաքում էր կենտրոնացված Հայկական ԽՍՀ բնակչության մեկ երրորդից ավելին: Արարատյան կամ կենտրոնական սոցիալ-տնտեսական շրջանին բաժին էր ընկնում Հայկական ԽՍՀ արդյունաբերության համախառն արտադրանքի (ԱՀԱ) 60, արդյունաբերության մեջ զբաղվածների 58, գյուղատնտեսության համախառն արտադրանքի (ԳՀԱ)՝ 47, ոռոգովի հողատարածքների՝ 44%-ը [1]: Այդտեղ էին հիմնականում կենտրոնացված հանրապետության գիտահետազոտական և մշակութային գլխավոր հաստատությունները, բուհերի գերակշիռ մասը (13-ից 11-ը) առողջապահական հանրապետական նշանակության բոլոր հաստատությունները և այլն): Արտադրական և ոչ արտադրական ոլորտի այդպիսի կենտրոնացումը մայրաքաղաքային ռեգիոնում և Արարատյան սոցիալ-տնտեսական շրջանում մի կողմից նպաստում էր ՀՀ միասնական տնտեսաարտադրական համալիրի ձևավորմանը, մյուս կողմից՝ անհամաչափ ուրբանացումը և համեմատաբար փոքր տարածքում բնակչության խիստ անհավասարաչափ տեղաբաշխումը խոչընդոտում էր ՀՀ առանձին տարածաշրջանների, մասնավորապես՝

* E-mail: a.potosyan@ysu.am

լեռնային, բարձրլեռնային և սահմանամերձ տարածքների սոցիալ-տնտեսական զարգացմանը՝ առաջացնելով այդպիսի տարածքներից միգրացիա դեպի մայրաքաղաքային ռեգիոն և հարակից տարածքներ: Այդ ամենի հետևանքով արդյունավետ չէին օգտագործվում այդպիսի տարածքների տարատեսակ ռեսուրսները: Նվազում էր ՀՀ առանձին տարածաշրջանների տեղն ու դերը երկրի միասնական տնտեսական համալիրում: Սոցիալ-տնտեսական զարգացման այդպիսի բևեռացումը չէր բխում երկրի ռազմավարական զարգացման շահերից, և ավելի էր մեծացնում մայրաքաղաքային ռեգիոնի ու կենտրոնական տնտեսական շրջանի և հանրապետության մնացած տնտեսական շրջանների ու տարածաշրջանների միջև սոցիալ-տնտեսական զարգացման տարբերությունները:

ԽՍՀՄ փլուզումից հետո ՀՀ-ում ստեղծված սոցիալ-տնտեսական նոր իրավիճակի պայմաններում վերը նշված խնդիրները ոչ միայն չեն լուծվել, այլև ավելի են սրացել: Այսպես՝ 2019 թ. Արարատյան սոցիալ-տնտեսական շրջանի մեջ մտնող մարզերին և Երևանին բաժին էր ընկնում ՀՀ ԱՀԱ 67, ԳՀԱ՝ 49,5, շինարարական աշխատանքների՝ 75, մատուցված ծառայությունների՝ 91%-ը [2]: Այստեղ է կենտրոնացված հանրապետության բնակչության կեսից ավելին (53,4%-ը), միայն Երևանում՝ 36,7%-ը: Բացի այդ, անկախ պետականության պայմաններում ՀՀ տարածքային համաչափ զարգացման խնդիրը ձեռք է բերել նոր բովանդակություն՝ դարձել է ազգային անվտանգության ապահովման, երկրի պաշտպանունակության ամրապնդման և հզորացման գրավականներից մեկը:

ՀՀ տարածքային համաչափ զարգացման ռազմավարական նշանակության խնդրի լուծման գործում իրենց դերն ունեն փոխադարձորեն միմյանց հետ կապված տնտեսական, սոցիալական, ենթակառուցվածքային, ժողովրդագրական, վարչատարածքային և այլ կարգի գործոնները: Այս առումով առանձնակի կարևորություն ունեն նաև անցած երեք տասնամյակում շարժընթացի հետևանքով ՀՀ բնակչության տեղաբաշխման մեջ տեղի ունեցած փոփոխությունները՝ դրանց տարածաշրջանային տարբերությունների վերհանումը, առկա հիմնախնդիրների բացահայտումը և լուծման ուղիների մատնանշումը:

**Հետազոտության նյութը և մեթոդիկան**: Հետազոտության համար հիմք են հանդիսացել 1990–2020 թթ. ՀՀ մշտական բնակչության թվաքանակի՝ ըստ մարզերի բաշխվածության ցուցանիշները, մարզերի և Երևանի տնտեսության հիմնական հատվածների մասնաբաժինները ՀՀ համապատասխան ոլորտների ընդհանուր ծավալում, ՀՀ տարածքի և գյուղատնտեսական նշանակության հողերի բաշխվածության ցուցանիշներն ըստ մարզերի: Հետազոտության ընթացքում կիրառվել են վիճակագրական վերլուծության, ընդհանրացման և համեմատական աշխարհագրական մեթոդները:

**Հետազոտության արդյունքների վերլուծություն**: Անցած երեսուն տարիներին (1990–2020 թթ.) ՀՀ բնակչության թվաքանակը նվազել է շուրջ 552 հազ.-ով կամ 15,7%-ով (աղյ. 1): Թեև այդ գործընթացն ընդգրկել է ՀՀ բոլոր մարզերը և Երևանը, սակայն բնակչության թվաքանակի նվազումն ըստ տարածաշրջանների (մարզերի) և Երևանի ընթացել է նկատելիորեն մեծ տարբերություններով՝ ինչպես բացարձակ, այնպես էլ հարաբերական ցուցանիշներով: Ըստ այդմ՝ մայրաքաղաքի բնակչության թիվը չնայած որ նվազել է 149,6 հազ.-ով, սակայն ՀՀ բնակչության թվաքանակում նրա մասնաբաժինն

ավելացել է տոկոսային 1.5 կետով: Մայրաքաղաքում և նրան սահմանակից չորս մարզերում (Արարատյան սոցիալ-տնտեսական շրջանում) միասին վերցրած բնակչության թվաքանակը նվազել է 10,6%-ով, կամ ավելի քան 1236 հազ.-ով, սակայն այդ չորս մարզերում ևս բնակչության բացարձակ թվի նվազումը չի հանգեցրել ՀՀ բնակչության թվաքանակում դրանց մասնաբաժինների նվազման: Ընդհակառակը՝ տոկոսային 3.8 կետով (63,2–67%) բարձրացել է Երևան քաղաքի և Արագածոտնի, Արարատի, Արմավիրի և Կոտայքի մարզերի բնակչության մասնաբաժինը ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում: Իսկ ահա Շիրակի և Լոռու մարզերում միասին վերցրած 1990–2020 թթ.-ին բնակչության բացարձակ թիվը նվազել է 226,4 հազարով կամ ավելի քան 32%-ով: Եթե 1990 թթ. այդ մարզերին միասին վերցրած բաժին էր ընկնում ՀՀ բնակչության 20%-ը, ապա 2020 թ.-ին 15,8 (աղյ. 1):

Գեղարքունիքի, Վայոց ձորի, Սյունիքի և Տավուշի մարզերում, որոնք համարվում են սահմանամերձ, ինչպես նաև ունեն լեռնային և բարձրլեռնային զգալի տարածքներ, բնակչության բացարձակ թիվը 1990–2020 թթ.-ին նվազել է 59,3 հազարով:

Վայոց ձորում և Տավուշում բնակչության բացարձակ թվի նվազումը չի հանգեցրել ՀՀ-ում դրանց մասնաբաժնի նվազման և մնացել է գրեթե նույնը, Սյունիքում այն բարձրացել է ընդամենը 0.4, իսկ Գեղարքունիքում՝ 0.8 տոկոսային կետով (աղյ. 1):

*Աղյուսակ 1*

*ՀՀ մշտական բնակչության թվաքանակի շարժընթացն ըստ մարզերի և ք.Երևանի (բացարձակ թվերով՝ հազ. մարդ և տոկոսներով, 1990–2020 թթ.) [3–6]*

| Մարզերը և Երևան քաղաքը | Տարեթիվ | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 1990 | | 2001 | | 2011 | | 2020 | |
| | բացարձակ | % | բացարձակ | % | բացարձակ | % | բացարձակ | % |
| ՀՀ | 3514,9 | 100 | 3213,0 | 100 | 3018,9 | 100 | 2963,0 | 100 |
| Երևան | 1237,5 | 35,2 | 1103,5 | 34,3 | 1060,1 | 35,1 | 1087,9 | 36,7 |
| Արագածոտն | 139,3 | 4,0 | 138,3 | 5,3 | 132,9 | 4,4 | 134,7 | 4,2 |
| Արարատ | 271,7 | 7,7 | 272,0 | 8,5 | 260,4 | 8,6 | 256,8 | 8,7 |
| Արմավիր | 278,0 | 7,9 | 276,2 | 8,6 | 265,8 | 8,8 | 264,4 | 8,9 |
| Գեղարքունիք | 241,0 | 6,8 | 237,6 | 7,4 | 235,1 | 7,8 | 227,2 | 7,7 |
| Լոռի | 367,3 | 10,5 | 286,4 | 8,9 | 235,6 | 7,8 | 213,0 | 7,2 |
| Կոտայք | 294,6 | 8,4 | 272,5 | 8,5 | 254,4 | 8,4 | 251,2 | 8,5 |
| Շիրակ | 333,5 | 9,5 | 283,4 | 8,8 | 251,9 | 8,4 | 231,3 | 7,8 |
| Սյունիք | 146,7 | 4,2 | 152,7 | 4,8 | 141,8 | 4,7 | 136,9 | 4,6 |
| Վայոց ձոր | 59,6 | 1,7 | 56,0 | 1,7 | 52,3 | 1,7 | 48,5 | 1,6 |
| Տավուշ | 145,7 | 4,1 | 134,4 | 4,2 | 128,6 | 4,3 | 121,1 | 4,1 |

Քննարկվող ժամանակաշրջանում (1990–2020 թթ.) ՀՀ քաղաքային բնակչության բաշխվածության մեջ ևս տեղի են ունեցել ոչ համաչափ փոփոխություններ: Բնակչության բացարձակ թիվը նվազել է ինչպես մայրաքաղաքում, այնպես էլ բոլոր մարզերի քաղաքներում: Սակայն մայրաքաղաքի բնակչության բացարձակ թվով 149,6 հազարով նվազման պայմաններում նրա մասնաբաժինը ՀՀ քաղաքային բնակչության մեջ բարձրացել է 6,2 տոկոսային կետով: Մայրաքաղաքին սահմանակից չորս մարզերում քաղաքային բնակչության բացարձակ թիվը նվազել է 101,6 հազ.-ով (24,2%-ով), սակայն

վերջիններիս մասնաբաժինը ՀՀ քաղաքային բնակչության մեջ էական փոփոխություններ չի կրել (աղյ. 2): Շիրակի և Լոռու մարզերում միասին քաղաքաբնակների բացարձակ թիվը վերջին երեսուն տարում (1990–2020 թթ.) նվազել է ավելի քան 222 հազարով կամ 46%-ով: Եթե 1990 թթ. այդ մարզերին բաժին էր ընկնում ՀՀ քաղաքային բնակչության 20, ապա 2020 թ.-ին՝ 13,8%-ը: Սահմանամերձ Գեղարքունիքի, Սյունիքի, Վայոց ձորի և Տավուշի մարզերում 1990–2020 թթ. քաղաքաբնակների բացարձակ թիվը նվազել է 46,2 հազարով (16,9%), սակայն դրանց մասնաբաժինը ՀՀ քաղաքային բնակչության մեջ էական փոփոխություններ չի կրել (1990 թ.՝ 11,4, 2020 թ՝. 12%) (աղյ. 2):

*Աղյուսակ 2*

*ՀՀ քաղաքային բնակչության թվի շարժընթացն ըստ մարզերի և ք. Երևանի (հազ. մարդ, 1990–2020 թթ.) [3–6]*

| Մարզերը և Երևան քաղաքը | Տարեթիվ | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 1990 | | 2001 | | 2011 | | 2020 | |
| | բացարձակ | % | բացարձակ | % | բացարձակ | % | բացարձակ | % |
| ՀՀ | 2416,8 | 100 | 2066,2 | 100 | 1911,3 | 100 | 1895,8 | 100 |
| Երևան | 1237,5 | 51,2 | 1103,5 | 53,4 | 1060,1 | 55,5 | 1087,9 | 57,4 |
| Արագածոտն | 36,9 | 1,5 | 32,9 | 1,6 | 30,6 | 1,6 | 26,8 | 1,4 |
| Արարատ | 86,5 | 3,6 | 79,9 | 3,9 | 74,1 | 3,9 | 72,2 | 3,8 |
| Արմավիր | 111,7 | 4,6 | 98,3 | 4,8 | 85,1 | 4,4 | 83,0 | 4,4 |
| Գեղարքունիք | 91,0 | 3,8 | 78,9 | 3,8 | 71,4 | 3,7 | 66,3 | 3,5 |
| Լոռի | 251,3 | 12,4 | 169,0 | 8,2 | 137,8 | 7,2 | 125,9 | 6,6 |
| Կոտայք | 185,5 | 7,7 | 154,0 | 7,5 | 137,5 | 7,2 | 137,0 | 7,2 |
| Շիրակ | 233,0 | 9,6 | 174,3 | 8,4 | 146,9 | 7,7 | 135,7 | 7,2 |
| Սյունիք | 100,7 | 4,2 | 104,2 | 5,0 | 95,2 | 5,0 | 92,8 | 4,9 |
| Վայոց ձոր | 23,5 | 1,0 | 19,6 | 0,9 | 18,4 | 1,0 | 17,1 | 0,9 |
| Տավուշ | 58,3 | 2,4 | 50,7 | 2,5 | 54,2 | 2,8 | 51,1 | 2,7 |

Ի տարբերություն քաղաքայինի, գյուղական բնակչության շարժընթացն ըստ մարզերի առանձնանում է որոշակի տարբերիչ գծերով:

Առաջին տարբերիչ գիծն այն է, որ գյուղական բնակչությունն ավելի փոքր չափով է նվազել, քան քաղաքայինը: Այսպես՝ 2001–2020 թթ. հանրապետությունում քաղաքային բնակչության թվաքանակի նվազումը կազմել է 170,4 հազ. կամ 8,2%, իսկ գյուղական բնակչությունը՝ 79,6 հազ. կամ 6,9%: Եթե քաղաքային բնակչությունը նվազել է բոլոր մարզերում, ապա գյուղական բնակչության դեպքում Արմավիրի և Գեղարքունիքի մարզերում առկա է բնակչության թվի որոշակի ավելացում (աղյ. 3): Երևանին սահմանակից Արարատի և Կոտայքի մարզերում 2001–2020 թթ. գյուղական բնակչության թիվը նվազել է համապատասխանաբար 3,9 և 3,6%-ով, Արագածոտնի մարզում՝ 7%-ով: Առավել նկատելի է գյուղական բնակչության թվի նվազումը Շիրակի և Լոռու մարզերում: Դրանցում միասին 2001–2020 թթ. գյուղական բնակչության թիվը նվազել է շուրջ 42,9 հազ.-ով կամ 19%-ով: Այս երկու մարզերին բաժին է ընկնում 2001–2020 թթ.-ի գյուղական բնակչության թվաքանակի նվազման շուրջ 54%-ը:

Ակնհայտ է, որ բնակչության թվաքանակի շարժընթացի գոյություն ունեցող միտումների պահպանումը կարող է ՀՀ տարբեր տարածաշրջանների,

մարզերի և բնակավայրերի միջև սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակների առկա տարբերությունները և տարածքային անհամաչափ զարգացման գոյություն ունեցող իրավիճակն ավելի խորացնել: Վերջինս հիմնավորվում է այն իրողությամբ, որ ՀՀ առանձին տարածաշրջանների, մարզերի և բնակավայրերի տնտեսական զարգացումը մի շարք այլ գործոնների հետ միասին (ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման ժամանակակից մակարդակի պայմաններում) նշանակալից չափով պայմանավորված է նաև տարածաշրջանի և բնակավայրերի մարդկային ներուժով՝ վերջինիս կազմով և կառուցվածքով:

*Աղյուսակ 3*

*Մարզերի գյուղական բնակչության թվի շարժընթացը ՀՀ գյուղական բնակչության մեջ (հազ. մարդ, տոկոսներ 1988–2020 թթ.) [3–7]*

| Մարզերը | Բացարձակ թվերով | | | | %-ով | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 1988 | 2001 | 2011 | 2020 | 1988 | 2001 | 2011 | 2020 |
| Արագածոտն | 88028 | 105437 | 102330 | 97900 | 8,2 | 9,2 | 9,2 | 9,2 |
| Արարատ | 166883 | 192131 | 186264 | 184600 | 15,5 | 16,8 | 16,8 | 17,3 |
| Արմավիր | 151523 | 177941 | 180720 | 181400 | 14,1 | 15,5 | 16,3 | 17,0 |
| Գեղարքունիք | 170359 | 158693 | 163652 | 160900 | 15,9 | 13,8 | 14,8 | 15,1 |
| Լոռի | 120292 | 116455 | 97753 | 87100 | 11,2 | 10,2 | 8,8 | 8,2 |
| Կոտայք | 100603 | 118488 | 116916 | 114200 | 9,4 | 10,3 | 10,6 | 10,7 |
| Շիրակ | 102495 | 109129 | 105033 | 95600 | 9,6 | 9,5 | 9,5 | 9,0 |
| Սյունիք | 48791 | 48537 | 46601 | 44100 | 4,5 | 4,2 | 4,2 | 4,1 |
| Վայոց ձոր | 40512 | 36392 | 33875 | 31400 | 3,8 | 3,2 | 3,0 | 2,9 |
| Տավուշ | 75625 | 83655 | 74423 | 70000 | 7,1 | 7,3 | 6,7 | 6,5 |
| Երևան | 7959 | – | – | – | 0,7 | – | – | – |
| ՀՀ-ում | 1072570 | 1146858 | 1107567 | 1067200 | 100 | 100 | 100 | 100 |

Անհամաչափ ուրբանացման, ՀՀ տարածքում քաղաքային և գյուղական բնակչության տեղաբաշխման միջև տարբերությունների էլ ավելի մեծացման պատճառով օբյեկտիվորեն նախադրյալներ են առաջանում ՀՀ տարածական անհամաչափ զարգացման և այդպիսի անհամաչափությունների միջև տարբերությունների էլ ավելի մեծացման: Այսպես՝ ՀՀ քաղաքային բնակչության մեջ Երևանի մասնաբաժնի 6.2 տոկոսային կետով ավելացումն այլ գործոնների հետ միասին նպաստել է մայրաքաղաքում ծառայությունների 81,7, մանրածախ առևտրի՝ 72,8, շինարարության՝ 52,3% կենտրոնացմանը՝ [2] թեև մայրաքաղաքին բաժին է ընկնում երկրի բնակչության 36,7, քաղաքային բնակչության 57,4%-ը:

Հանրապետության տարածքային անհամաչափ զարգացման և բնակչության տեղաբաշխման և շարժընթացի առավել ակնհայտ դրսևորումներ են ի հայտ գալիս, երբ համեմատում ենք ըստ մարզերի գյուղատնտեսական հողատարածքների և վարելահողերի բաշխվածության, մարզերի գյուղական բնակչության շարժընթացի և ՀՀ գյուղատնտեսության համախառն արտադրանքի մեջ մարզերի մասնաբաժինների ցուցանիշները (աղյ. 3–5): Շիրակի և Լոռու մարզերին բաժին է ընկնում հանրապետության գյուղատնտեսական հողատարածքների և վարելահողերի համապատասխանաբար 22,6 և 27%-ը, սակայն այս մարզերը միասին 2018 թ. տվել են ՀՀ ԳՀԱ-ի 18,6, իսկ 2018 թ.՝ 19,2%-ը: Հարկ է նկատել, որ վերջին քսան տարում Լոռու մարզի գյուղական

բնակչության մասնաբաժինը ՀՀ գյուղական բնակչության մեջ նվազել է տոկոսային 2 կետով, իսկ Ծիրակինը՝ 0,5:

*Աղյուսակ 4*

*ՀՀ տարածքի գյուղատնտեսական նշանակության հողերի բաշխվածությունն ըստ մարզերի %-ով [2]*

| Մարզերը | Տարածքը | | Գյուղատնտեսական հողատարածքներ | | Գյուղատնտեսական հողատարածքների բաժինը ընդհանուրից, % | Վարելահողերի բաժինը, % |
|---|---|---|---|---|---|---|
| | *կմ*$^2$ | % | *կմ*$^2$ | որից՝ վարելա-հողեր | | |
| Արագածոտն | 2756 | 9,3 | 2181,5 | 540,1 | 79,2 | 24,8 |
| Արարատ | 2090 | 7,0 | 1565,6 | 299,8 | 74,9 | 16,0 |
| Արմավիր | 1242 | 4,2 | 970,4 | 411,5 | 78,1 | 42,4 |
| Գեղարքունիք | 5349 | 18,0 | 3456,2 | 815,8 | 84,9 | 23,6 |
| Լոռի | 3799 | 12,8 | 2509,0 | 420,4 | 66,0 | 16,8 |
| Կոտայք | 2086 | 7,0 | 1552,4 | 375,8 | 74,4 | 24,2 |
| Շիրակ | 2680 | 9,0 | 2108,8 | 781,5 | 78,7 | 37,0 |
| Սյունիք | 4506 | 15,1 | 3063,8 | 439,6 | 68,0 | 14,4 |
| Վայոց ձոր | 2308 | 7,8 | 1896,1 | 156,3 | 82,2 | 8,2 |
| Տավուշ | 2704 | 9,1 | 1107,5 | 255,8 | 41,0 | 23,1 |
| Երևան | 223 | 0,7 | 33,5 | 9,2 | 15,0 | 27,5 |
| Ընդամենը | 29743 | 100 | 20444,8 | 4455,8 | 68,7 | 21,8 |

*Աղյուսակ 5*

*Մարզերի և Երևանի մասնաբաժինը ՀՀ գյուղատնտեսության համախառն արտադրանքում [2]*

| Մարզեր | 2014 | 2016 | 2018 |
|---|---|---|---|
| ՀՀ | 100 | 100 | 100 |
| Արագածոտն | 10,1 | 9,9 | 10,2 |
| Արարատ | 14,4 | 15,4 | 14,0 |
| Արմավիր | 17,7 | 20,0 | 19,9 |
| Գեղարքունիք | 18,1 | 12,7 | 13,2 |
| Լոռի | 7,5 | 7,9 | 8,2 |
| Կոտայք | 6,1 | 6,9 | 8,2 |
| Շիրակ | 11,1 | 11,6 | 11,0 |
| Սյունիք | 7,1 | 7,4 | 7,1 |
| Վայոց ձոր | 2,2 | 2,5 | 2,5 |
| Տավուշ | 4,6 | 4,5 | 4,4 |
| Երևան | 1,1 | 1,2 | 1,3 |

2001–2020 թթ. Արարատի և Արմավիրի մարզերի գյուղական բնակչության մասնաբաժինը ՀՀ-ում ավելացել է տոկոսային 2 կետով (32,3–34,3), իսկ ԳՀԱ-ի մեջ 2014–2018 թթ.՝ 1,8%-ով: Սրանք միասին 2018 թ.-ին տվել են ՀՀ ԳՀԱ-ի շուրջ 34%-ը, թեև դրանց բաժին է ընկնում ՀՀ գյուղատնտեսական ընդհանուր հողատարածքի 12,4%, վարելահողերի՝ 14,8%-ը: Գեղարքունիքի մարզում, որտեղ 2001–2020 թթ. գյուղական բնակչության մասնաբաժինը ՀՀ գյուղական բնակչության մեջ ավելացել է 1,3 տոկոսային կետով, իսկ մարզին բաժին է ընկնում ՀՀ գյուղատնտեսական հողատարածքների շուրջ 17 և

վարելահողերի՝ 18,3%-ը, 2014–2018 թթ. գյուղատնտեսության համախառն արտադրանքի բաժինը ՀՀ-ում նվազել է 4,9 տոկոսային կետով:

**Եզրակացություն:** Ընդհանրացնելով կատարված վերլուծության արդյունքները կարող ենք եզրակացնել, որ.

1. ի թիվս այլ գործոնների ՀՀ տարածքային համաչափ զարգացումը կախված է նաև բնակչության տեղաբաշխման և վերաբաշխման մեջ տեղի ունեցող փոփոխություններից, մասնավորապես՝ ըստ մարզերի կամ տարածաշրջանների քաղաքային և գյուղական բնակչության մասնաբաժինների փոփոխություններից;

2. անցած երեսուն տարում հանրապետությունում քաղաքային բնակչության մեջ մայրաքաղաքի բնակչության 6,2 տոկոսային կետով բարձրացման հետ միաժամանակ ավելի է մեծացել մայրաքաղաքի մասնաբաժինը ծառայությունների, մանրածախ առևտրի, շինարարության և այլ բնագավառներում;

3. Շիրակի և Լոռու մարզերը, որոնց բաժին է ընկնում ՀՀ գյուղատնտեսական հողատարածքների 22,6 և վարելահողերի 27%-ը, տալիս են ՀՀ գյուղատնտեսական համախառն արտադրանքի մոտ 19%-ը: Ի թիվս այլ գործոնների այդ անհամամասնությունը պայմանավորված է նաև ՀՀ գյուղական բնակչության մեջ այդ մարզերի գյուղական բնակչության ցածր տեսակարար կշռով (17,2%);

4. մարզերում և տարածաշրջաններում բնակչության տեղաբաշխման և շարժընթացի առկա միտումների պահպանումը կարող է ավելի մեծացնել ՀՀ տարածքում բնակչության տեղաբաշխման տարբերությունները, ինչի հետևանքով արդյունավետ չեն օգտագործվի առանձին մարզերի կամ տարածաշրջանների ռեսուրսային ներուժը՝ մասնավորապես գյուղատնտեսական հողատարածքները;

5. ՀՀ տարածաշրջանային քաղաքականության նպատակային ուղղություններից մեկը պետք է դառնա մի կողմից մայրաքաղաքային ռեգիոնում և Երևանում բնակչության կենտրոնացման նվազեցումը, մյուս կողմից՝ մայրաքաղաքային ռեգիոնից դուրս բնակչության թվաքանակի ավելացմանն ուղղված միջոցառումների իրականացումը: Դա հնարավորություն կտա ավելի արդյունավետ օգտագործել մայրաքաղաքային ռեգիոնից դուրս տարատեսակ ռեսուրսները, նպաստել նրանց սոցիալ-տնտեսական զարգացմանը և հանրապետության տարածքային համաչափ զարգացմանը:

*Ստացվել է՝ 01.10.2020*
*Գրախոսվել է՝ 26.11.2020*
*Հաստատվել է՝ 10.12.2020*

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Վալեսյան Լ.Հ. *Հայկական ՍՍՀ տնտեսական և սոցիալական աշխարհագրություն*: Եր. (1988), 456 էջ:
2. *ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով 2019 թ.*: https://armstat.am/am/?nid=82&id=2203
3. Հայաստանի Հանրապետության 2001 թ. մարդահամարի արդյունքները (ՀՀ ցուցանիշները), Եր. (2003), 542 էջ: https://armstat.am/am/?nid=748

4. *Հայաստանի ժողովրդագրական ժողովածու*: Եր. (2019): https://armstat.am/?nid=82@year=2019
5. *Հայաստանի Հանրապետության 2011 թ. մարդահամարի արդյունքներ*, https://armstat.am/am/?nid=532
6. *ՀՀ մշտական բնակչության թվաքանակը 2020 թ. հուլիսի 1-ի դրությամբ*, https://armstat.am//nid=82@ld=2279
7. Պոտոսյան Ա.Հ. *Հայաստանի Հանրապետության գյուղական բնակչությունը և բնակավայրերը*: Եր. (2017), 486 էջ:

А. А. ПОТОСЯН

## ВЛИЯНИЕ ДИНАМИКИ ЧИСЛЕННОСТИ НАСЕЛЕНИЯ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ НА РАВНОМЕРНОЕ ТЕРРИТОРИАЛЬНОЕ РАЗВИТИЯ

### Резюме

Одной из приоритетных задач социально-экономического развития республики Армения является ее равномерное (пропорциональное) территориальное развитие. Решение этой стратегической задачи зависит от выявления существующих тенденций и изменений, происходящих в размещении и перераспределении населения РА. В статье представлены территориальные различия в размещении населения вследствие его динамики, имевшие место за последние три десятилетия, и обусловленное этим обострение проблем равномерного территориального развития, указаны пути решения последнего.

A. H. POTOSYAN

## THE INFLUENCE OF POPULATION DYNAMICS OF THE REPUBLIC OF ARMENIA ON THE BALANCED TERRITORIAL DEVELOPMENT

### Summary

One of the priority tasks of the socio-economic develeopment of the Republic of Armenia is its balanced territorial development. The solution to this strategic problem also depends on the identification of existing trends and changes in the placement and redistribution of the RA population. The article presents the territorial differences in the distribution of the population, caused by its dynamics, which took place over the past three decades, and the resulting aggravation of the problems of balanced territorial development, and indicates the ways of their solution.